



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք.Երևան, Գ. Նժդեհի 23, հեռախոս + (37410) 44-84-08 -/346/

« 17 » - հոկտեմբերի - 2012թ.
ԳԳ 7 25258

Ու՞ր ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Ու՞մ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ին

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական վերաքննիչ դատարանի թիվ ԵԿԴ/3047/02/11 քաղաքացիական գործով 17.10.2012թ. որոշումը / 5 թերթից/:

Դատավորի օգնական՝

Ե. Սահակյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3047 /02/11

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ
վարչական շրջանների առաջին աստյանի
ընդհանուր իրավասության դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ա. Սուրբյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը
(այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան),

*Նախագահությամբ դատավոր՝
Դատավորներ՝*

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Գ. ՄԱՏԻՆՅԱՆԻ
Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2012 թվականի հոկտեմբերի 17-ին

դռնբաց դատական նիստում, քննելով <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության կողմից բերված վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԴ/3047/02/11 վճռի դեմ, կայացված քաղաքացիական գործով ըստ հայցի՝ <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի՝ գրպարտության միջոցով գործարար համբավին պատճառած վնասի հատուցման պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

<<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի /այսուհետ նաև՝ Պատասխանող/ և խնդրել է նրանից հոգուտ Հայցվորի բռնազանձել գործարար համբավին պատճառած վնասի հատուցում:

Դատարանի վճռով՝ գործարար համբավին պատճառած վնասի հատուցման պահանջի մասին հայցը մերժվել է, քաղաքացիական գործի վարույթը հայցապահանջի մնացած մասով՝ կարճվել է:

Դատարանի վճռի դեմ՝ հայցը մերժելու մասով, վերաքննիչ բողոք է ներկայացրել Հայցվորը, որի պատասխան է ներկայացրել պատասխանող կողմը:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի 10.09.2012 թվականին որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու մասին:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է կիրառել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը, 19-րդ հոդվածը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը պաշտպանում է Հայցվորի գործարար համբավը՝ գրպարտությունից:

Դատարանի եզրահանգումն այն մասին, որ «20 տարեկան պոչիկով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները, ու էդ լակոտների բերանների արտահայտություններն անձնական վիրավորանք են հասցնում: Երբ փալնքոտ լակոտը երկիր պահած, երկրի համար տուժած մարդուն վիրավորում է լկտի բացականչություններով, ես դա չեմ հանդուրժելու...: Նրանք անպատվում են պաշտպանության նախարարին, ասելով՝ էդ միտտանին: ...» արտահայտությունը, հանդիսանում է գնահատողական դատողություն, ուղղակի չի համապատասխանում իրականությանը:

Հայցվորի հստակ դիրքորոշմամբ, ինչը բազմիցս արտահայտվել է սույն դատավարության թե նախնական դատական նիստերի և, թե դատաքննության ընթացքում, գրպարտություն էր պաշտպանության նախարարի ֆիզիկական կարողությունների և հաշմության առնչությամբ անպարկեշտ արտահայտություններ թույլ տվող անձանց բերելը:

Այլ խոսքով, պատասխանող կողմը գրպարտել էր Հայցվորին այն բանում, թե իբր Հայցվորը բերում է անձանց, որոնք բարոյականության և մասամբ նաև իրավական (քանի որ ֆիզիկական, բնական արատի վերաբերյալ արժանապատվության նկատմամբ ոտնձգող արտահայտությունները վիրավորանք են համարվում, համաձայն քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, անկախ դրանց իրականության համապատասխանությունից) նորմերին հակառակ վարքագիծ են դրսևորում:

Այս կապակցությամբ Դատարանը, միտումնավոր շեղելով մեջբերված արտահայտության իմաստը, փորձել է դրանում պարունակվող գրպարտությունը, որը ոչ այլ ինչ է, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հակտանիշների կազմ՝ գրպարտություն, գնահատել է որպես գնահատողական դատողություն:

Անգամ նույնիսկ, եթե պատասխանող կողմի արտահայտությունները լինեին զուտ գնահատողական դատողություններ, ապա դրանցում գործարար համբավի նկատմամբ ոտնձգող արատավորող արտահայտությունները պետք է իրենց տակ ունենաին բավարար փաստական տվյալների բազա:

Ոչ Հայաստանի Հանրապետության, ոչ էլ միջազգային իրավունքը չունեն և երբևէ չեն պարունակել նորմեր, որոնք «գնահատողական դատողություն» եզրի տակ թույլ տային հասկանալ գործարար համբավի, իսկ ֆիզիկական անձանց դեպքում նաև՝ պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգության ազատություն:

Այն ուղղակի հակասության մեջ կլինեի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ և 23-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջների հետ:

Գնահատողական դատողությունների նկատմամբ կիրառվող մոտեցման տարբերությունը փաստերի նկատմամբ կիրառված մոտեցումից, ընդհամենը տարբերվում է նրանով, որ փաստերը կարելի է ստուգել, իսկ դատողությունները՝ ստուգման ենթակա չեն:

Այն որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես գնահատողական դատողությունների միջոցով իրավաբանական անձի գործարար համբավի, իսկ ֆիզիկական անձանց դեպքում նաև պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգության ազատություն:

Հայցվորի սույն կետում շարադրված դիրքորոշումն ամենևին չի նշանակում, որ Հայցվորը համաձայն է Դատարանի՝ «գնահատողական դատողություն» եզրահանգման հետ:

Դատարանի այն եզրահանգումն, որ կատարված արտահայտություններն ուղղված էին անձանց անորոշ շրջանակի և կոնկրետ Հայցվորի անվանումը ոչ մի կերպ չի հիշատակվում, այսինքն՝ ընդհանուր արտահայտությունների տրամաբանությունից հետևում է, որ Հայցվորը չէր քննադատվում Պատասխանողի կողմից, ուղղակի արդյունք է Պատասխանողի դեմ Հայցվորի պահանջները չբավարարելու Դատարանի ցանկության, բայց ոչ գործի նյութերի հիման վրա կատարված անկախ և անկողմնակալ դատողության:

Մասնավորապես այն, որ Պատասխանողի կողմից նկատի էր ունեցվել կոնկրետ Հայցվորը, փաստվում է հենց Պատասխանողի կողմից սույն բողոքում մեջբերված, Պատասխանողի իսկ բացատրություններից և հայտարարություններից: Այս հանգամանքը հաշվենկատորեն անտեսվել է Դատարանի կողմից, քանի որ այդ հանգամանքի անկողմնակալ գնահատականը Դատարանին թույլ չէր տալու զալ վճռում շարադրված եզրահանգմանը:

Դատարանի կողմից որևէ գնահատականի չի արժանացել այն հանգամանքն, որ ամբողջ դատավարության ընթացքում Պատասխանողն այդպես էլ չէր հերքել Հայցվորին նկատի ունենալու հանգամանքը: Պատասխանողի ներկայացուցիչը դատավարական բարձրակարգ հմտությունների և բավականին հետաքրքիր պաշտպանության ձևի կիրառմամբ, այնուամենայնիվ, իր կամքից դուրս հանգամանքների բերումով, ի վիճակի չէր ապահովել հետևյալ հարցի հստակ պատասխանը, այն է՝ «Արդյոք Պատասխանողը նկատի էր ունեցել Հայցվորին»:

Հետևաբար, Դատարանի կողմից սխալ է կիրառվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ և 1087.1-րդ հոդվածները, որի արդյունքում Հայցվորը զրկվել է նշված հոդվածներով նախատեսված իր իրավունքներից:

Խնդրել է Վերաքննիչ դատարանին՝ հայցը մերժելու մասով բեկանել Դատարանի վճիռը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության

2.1 Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները

Բողոքը պետք է վերադարձնել, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ, 140-րդ և 75-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն, 2012 թվականի հուլիսի 20-ի վճռի դեմ բողոք կարող էր բերվել մինչև 2012 թվականի օգոստոսի 20-ը, քանի որ 2012 թվականի օգոստոսի 21-ից վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ բողոքում միջնորդել են հարգելի համարել բողոքը բերելու համար բաց թողնված մեկ օրյա ժամկետը, որպես հարգելի պատճառ նշելով Դատարանի կողմից 21.07.2012 թվականին վճիռը Հայցվորին ուղարկելու հանգամանքը (Հայցվորի կողմից վճիռը ստացվել է 24.07.2012 թվականին):

Միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը սահմանում է, որ Դատարանը պարտավոր էր վճռի օրինակը մինչև հրապարակման հաջորդ օրը ուղարկել կողմերին, ինչը և Դատարանը պատշաճ կերպով կատարել է՝ 21.07.2012 թվականին վճռի օրինակն ուղարկելով Հայցվորին:

Այն, որ Հայցվոր կողմը վճռի հրապարակման օրը ներկա չի գտնվել հաստատվում է նաև քաղաքացիական գործը լուսաբանող ԶԼՄ-ների հաղորդագրություններից:

Մասնավորապես՝ «Առավոտ» օրաթերթի լրագրող Ռուզան Մինասյանը 20.07.2012 թվականին ժամը 14.20-ին լուր է տեղադրել կայքում հստակ նշելով, որ Արթուր Սաքունցը և Վահե Գրիգորյանը հրապարակմանը ներկա չէին ([http:// www.aravot.am/2012/07/20/92586/](http://www.aravot.am/2012/07/20/92586/)):

Այս պայմաններում Դատարանի գործողությունները բխել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքից:

Միաժամանակ հարկ է ներկայացնել հետևյալ դիրքորոշումը՝ կապված վճիռը 23.08.2012 թվականին ստացված լինելու հետ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը յուրաքանչյուրին երաշխավորում է իրենց քաղաքացիական իրավունքները կամ պարտականությունները որոշելիս հրապարակային դատաքննության իրավունք:

Դատական ակտի հրապարակումը հանդիսանում է հրապարակային դատաքննության բաղկացուցիչներից մեկը, երբ հանրությանը օբյեկտիվ հնարավորություն է տրվում հետևելու դատական գործերի ընթացքին և որոշակի առումով զսպող և վերահսկողություն իրականացնող մարմնի դեր իրականացնելու:

Pretto and Others v Italy գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ամրագրել է. «Եվրոպական Խորհրդի շատ անդամ պետություններ ունեն որոշումները հրապարակային դարձնելու համար բարձրաձայն ընթերցելու փոխարեն այլ միջոցների դիմելու երկարամյա ավանդույթ..., օրինակ, տեղադրել այն հանրության համար հասանելի տեղեկատուի մեջ:

Այս առումով, դատական ակտերի հրապարակման միևնույն օրը ամբողջական տեքստի տեղադրումը տեղեկատուի մեջ կարող է ծառայել այլընտրանքային միջոց դատաքննության հրապարակայնության սկզբունքի ապահովման առումով: Այդ դեպքում որևէ խնդիր չի առաջացնի «հրապարակման պահ»-ից որոշման դեմ բողոքարկելու համար սահմանված ժամկետի հաշվարկումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում մի հանգամանք ևս կարևորում է, այն, որ «Դիմումատուն կամ նրա ներկայացուցիչը պետք է պատշաճ ջանասիրություն դրսևորեն դատարանի քարտուղարություն մուտքագրված որոշման պատճենը վերցնելու համար»:

Հետևաբար, բացի այն փաստից, որ Դատարանը 20.07.2012 թվականին հրապարակել է վճռի եզրափակիչ մասը, վճիռը տեղադրվել է նաև www.datalex.am կայքում, իսկ 21.07.2012 թվականին՝ հաջորդ օրը, ուղարկվել է Հայցվորին:

Խնդրել է Հայցվորի միջնորդությունը՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին՝ մերժել, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերադարձնել:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

www.hraparak.am էլեկտրոնային էջում 17.10.2011 թվականին հրապարակվել է՝ «Ով արյուն կլափի, թող գա իր երեխու դեմ» վերնագրով Վլադիմիր Գասպարյանի կողմից տրված հարցազրույցը, որում նշվել է. «Ցավացող ծնողը լկտի չի լինի, ցավացող ծնողը կանգնած է, բայց ես տեսնում եմ լկտիություն բանակի նկատմամբ, նախարարի նկատմամբ, ես տեսնում եմ թույն մեջները: 20 տարեկան պոչիկներով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները, ու էդ լակոտների բերանների արտահայտություններն անձնական վիրավորանք են հասցնում: Երբ փսլնքոտ լակոտը երկիր պահած, երկրի համար տուժած մարդուն վիրավորում է լկտի բացականչություններով, ես դա չեմ հանդուրժելու...: Նրանք անպատվում են պաշտպանության նախարարին, ասելով՝ էդ միտտանին: Ես ասում եմ՝ էդ չորստանիններից շատ գործ է անում մեր միտտանին, չէ որ էդ մարդն ինչ որ արել է, ես չեմ պաշտպանում, արել է էս երկրի համար, որ էդ ոտքը կորցրել է» (հատոր 1-ին. գ.թ.9):

«Զինուժ» ծրագրում Վլադիմիր Գասպարյանի կողմից 15.10.2011 թվականին տրված հարցազրույցի էլեկտրոնային կրիչում առկա է հետևյալ կարծիքը. «Ոնց կարող է ցավալ մարդու սիրտ մի երկրի բանակի համար, երբ ֆինանսավորվում ու աշխատավարձ է ստանում ուրիշ երկրից: Ոնց կարող է մարդու սիրտ ցավա, երբ մտածում է՝ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատել: Այդ մարդիկ ովքեր դրանով զբաղվում են անհայրենիք, աներկիր, անշնորք, ուրիշին դուր գալու, ուրիշին ծառայելու, նոքարի, սեփական արժանապատվությունը չունեցող երևույթներ են...» (հատոր 1-ին. գ.թ. 7):

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով Դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ և 1087.1-րդ հոդվածների սխալ կիրառման վերաբերյալ բողոքի հիմքին, գտնում է այն անհիմն, հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ սույն գործի փաստերի՝ www.hraparak.am էլեկտրոնային էջում 17.10.2011 թվականին հրապարակվել է վերը նշված բովանդակությամբ հարցազրույցը և «Զինուժ» ծրագրում 15.10.2011 թվականին տեղ է գտել նույն անձի կարծիքը:

Հայցվորի համոզմամբ վերը նշվածով պատասխանող կողմը արատավորել է հայցվոր կազմակերպության գործարար համբավը, քանի որ դրանցում տեղ գտած արտահայտություններն իրենց բովանդակությամբ պարունակում են վիրավորանք և զրպարտություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Արատավորող են համարվում այն տեղեկությունները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Գործարար համբավը հեղինակության մասնավոր դրսևորում է և իրենից ներկայացնում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի գործարար շրջանառության, այդ թվում՝ գործարարության ոլորտում դրսևորած որակների մասին կարծիք:

Գործարար համբավն իրավաբանական կամ ֆիզիկական անձի ձևավորման, կայացման, զարգացման, առաջընթացի կարևորագույն հիմնաքարն է:

Գործարար համբավը կարող է ունենալ ձեռնարկատիրական գործունեության բնագավառում դրսևորած որակներ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք՝ որպես կանոն, այդպիսի հատկանիշներ ունեն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Օրենսդիրը գործարար համբավն արատավորող տեղեկությունների անգամ մոտավոր ցանկ չի սահմանում, թողնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, ելնելով ձևավորված բարոյական նորմերից, գործարար սովորույթներից, տարածված տեղեկությունների արժեքավորման հասարակական պատկերացումներից, որոշի տեղեկությունների բնույթը և դրանք հերքելու անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վերաքննիչ դատարանը բողոք բերած անձի փաստարկների հիմնավորվածությունը և Դատարանի պատճառաբանության ու եզրահանգման իրավաչափությունն անհրաժեշտ է համարում գնահատման արժանացնել Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշման համատեքստում:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը, դատարաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառման առումով օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտության առկայությունից ելնելով, անդրադարձել է վերոնշյալ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը և 2012 թվականի ապրիլի 27-ի թիվ ԼԴ/0749/02/10 որոշմամբ, քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Վանո Եղիազարյանի ընդդեմ Բորիս

Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջների մասին, արձանագրել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վիրավորանքը (պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը) կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլացիաներ, սիմվոլներ): Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել միջոցների շարքը, որոնք կարող են կիրառվել վիրավորանքն արտահայտելիս՝ հնարավորություն տալով իրավակիրառողին, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, որոշել՝ արդյոք տվյալ միջոցի օգտագործմամբ կատարված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք: Հետևաբար վիրավորանքը կարող է արտահայտվել ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, որը ներառված չէ վերոնշյալ թվարկման մեջ»:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝

«1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստը ապացուցելու դատավարական բեռը կրում է հայցվորը.

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա.

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը»:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝

«1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական.

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային.

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի.

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և

կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ (տե՛ս Ղյուլղին և Կիսլովը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44):

Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործում առկա փաստական հանգամանքներով հաստատվում է, որ բողոք բերող անձի կողմից վկայակոչված վերը նշված երկու դեպքում էլ կատարված արտահայտություններն ուղղված են անձանց անորոշ շրջանակի և կոնկրետ Հայցվորի անվամանումն ոչ մի կերպ չի հիշատակվում, այսինքն, երկու դեպքում էլ ընդհանուր արտահայտությունների տրամաբանությունից հետևում է, որ Հայցվորին չէ քննադատել պատասխանող կողմը, հետևաբար, արված արտահայտությունն չի արատավորում Հայցվորի գործարար համբավը:

Բացի այդ Պատասխանողի կողմից տրված հարցազրույցում արտահայտված արտահայտության մեջ առկա չէ ոչ վիրավորանք և ոչ էլ զրպարտություն՝ որոնք կարատավորեին Հայցվորի գործարար համբավը, քանի որ վերոգրյալի մեկնաբանությունից ակնհայտ է դառնում, որ այն վերացական, առանց կոնկրետ հասցեատիրոջ, անձանց անորոշ շրջանակի ուղղված գնահատող դատողություններ են, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին վիրավորանք հասցրած անձանց, ինչը հստակ երևում է այդ հոդվածում և այս առումով Հայցվորը երբեք չի պնդել այն հանգամանքը, որ երբևէ նշված անձին վիրավորանք է հասցվել կազմակերպության կողմից, որպեսզի պատասխանող կողմի նշված արտահայտություններն ընդունվեին կազմակերպության հասցեին ուղղված:

Ինչ վերաբերում է «Շելսինկյան կազմակերպություններ» արտահայտությանը, ապա դա չի նշանակում, որ խոսքը գնում է հենց Հայցվորի մասին, քանի որ վերջինս կոչվում է՝ «Շելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ և նման տրամաբանությամբ կարելի է ենթադրել, որ կազմակերպության անվանումի մեջ ներառած յուրաքանչյուր բառի գործածման դեպքում, կազմակերպությունը պետք է ենթադրեր, որ խոսքը իրենց է վերաբերում:

«Զինուժ» ծրագրում Պատասխանողի կողմից 15.10.2011 թվականին տրված հարցազրույցում առկա արտահայտությունների մեջ ևս զրպարտության և վիրավորանքի տարրեր առկա չեն և արտահայտած կարծիքը կրկին ուղղված է մարդկանց անորոշ շրջանակի, այլ ոչ թե կոնկրետ Հայցվորին:

Վերոնշյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքերում պատասխանող կողմը ընդամենը քննադատել է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները և ոչ թե կոնկրետ անձանց, այդ թվում նաև՝ Հայցվորին, նկատի ունենալով նաև այն փաստը, որ Հայցվորը հանդիսանալով հասարակական կազմակերպություն նպատակ է հետապնդում աջակցելու ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը, այսինքն՝ ըստ էության կողմ է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթների բացահայտման և քննադատման գործընթացին:

Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ անձը չի կարող իր սուբյեկտիվ ընկալումների արդյունքում որևէ տեղեկատվություն վերագրել կամ չվերագրել իրեն, այլև՝ ինչպես արդեն վերը նշվեց, տեղեկատվության վերաբերելիությունը անձին պետք է լինի հստակ և որոշակի, հետևաբար, երբ գործով չի հաստատվել, որ ներկայացված կարծիքը

վերբերում է Հայցվորին, ուստի և առկա չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ «Նշված արտահայտությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով չեն կարող համարվել տեղեկություններ, փաստի վերաբերյալ պնդումներ, այլև դրանք հանդիսանում են պատասխանողի կողմից հասարակական կյանքում տեղի ունեցած իրադարձության, երևույթի կապակցությամբ արված գնահատողական դատողություններ, որոնք ենթակա չեն ապացուցման և վերը նշված հիմնավորումների ուժով չեն կարող համարվել հայցվորի գործարար համաբավն արատավորող տեղեկություններ, պարզապես այդպիսի տեղեկություններ չլինելու և կոնկրետ Կազմակերպությանը հասցեագրված չլինելու պատճառով»:

Յուրաքանչյուր դեպքում, երբ առկա է պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն վիրավորանքի կամ զրպարտության միջոցով արատավորելու պահանջ, պետք է ուշադրության արժանացնել հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, նրա կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

Նշված հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, իր 2011 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշմամբ, արձանագրելով քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատարանների կողմից ուշադրության արժանացնելու և պարզելու, թե արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները:

Նշված դրույթի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը արձանագրել է նաև միջազգային իրավական պրակտիկան, ըստ որի՝ «վիրավորանք և զրպարտություն» որակումների հիմնական տարբերությունն այն է, որ զրպարտության պարագայում խոսքը վերաբերվում է դիտավորությամբ կեղծ, իրականությանը չհամապատասխանող փաստերի, փաստացի տվյալների տարածման միջոցով անձի արժանապատվությունն արատավորելու, նրան հանցանքի կամ զանցանքի մեջ իրականությանը չհամապատասխանող փաստերի հիման վրա մեղադրելուն, իսկ վիրավորանքը ենթադրում է անձի՝ դիտավորությամբ, կանխամտածված նվաստացում: Արձանագրելով նաև, որ նույն տրամաբանությունն է դրված նաև քննության առարկա հոդվածում հասկացությունների բնորոշման հիմքում:

Տվյալ դեպքում սույն գործով պատասխանող կողմը իր ներկայացարած դիրքորոշումներով հայտնել է, որ չի զրպարտել և վիրավորել Կազմակերպության գործարար համբավը, այլ կատարվել է գնահատողական դատողություններ երևույթների վերաբերյալ, որպիսի պայմաններում, ելնելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի մասով առկա Եվրոպական դատարանի կողմից հետևողական և շարունակաբար ձևավորվող իրավական դիրքորոշումների

ընդհանրացված համակցության, Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների ենթադրյալ խախտմանը վերաբերող կոնկրետ վճիռների, Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև վերը նշված իրավանորմերի վերլուծությունից, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանի եզրահանգումն առ այն, որ «...կատարված հրապարակային արտահայտությունները չեն կարող որակվել որպես զրպարտության միջոցով գործարար համբավի արատավորում», իրավաչափ է և բխում է գործի փաստական հանգամանքներից:

Առավել ևս, որ Հայցվորը դատաքննությամբ չի հիմնավորել, թե ինչ իրավունքեր, ազատություններ կամ օրինական շահեր է խախտել Պատասխանողը, ինչի հետևանքով Հայցվորը ստիպված է եղել դիմել դատական պաշտպանության, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է մերժման, որպիսի իրավացի եզրահանգման էլ եկել է Դատարանը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հիմնավոր չհամարելով վերաքննիչ բողոքի հիմքերը գտնում է, որ Դատարանը կատարելով սույն գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, կայացրել է վեճն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի այն բեկանելու հիմքեր առկա չեն, հետևաբար բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 20.07.2012 թվականի թիվ ԵԿԴ 3047/02/11 քաղաքացիական գործով կայացրած վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ՝
Գ. ՄԱՏԻՆՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ՝
Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ծանոթություն՝ սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ:
Նախագահող դատավոր՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ